

Դյօն
ՀԱՅՈՒԹ

Խ Ս ի ր

ՄԵՐ ՍԻՒՐԵԹՆԵՐԵՆ

Գիրքը ՄՆԱՑԱԾ ՕԳՈՒՏԸ ՓԵՅՔԵԾ ԿԵՆԻՐ
ԹՈՓԾԻ ԳԻՒՂԻ ԱՅՆ ԶՔԸՆՈՐ ԱՅԱԿԵՐՏ-ԱՅԱԿԵՐՏՈՒ-
ՀԻՆԵՐՈՒՆ ՈՒՍՄԸՆ ՀԱՄԸՐ, ՈՐՈՆՑ ԾՆՈՂՆԵՐԸ
ԳՆԱՑՈՒ ԵՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՅՏՊԱՆՈՒԹԵԵՆ ՀԱՄԸՐ
ԱՐԻՆ ԹՈՓԵԼՈՒ.

891. 99
Խ-34

Нахичевань на-Дону
Пар. тип. С. Я. АВАКОВА

1915

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
ՏՊ. Ա. Յ. ԱԽԱԳԵԱՆԻ

ՀԱՐՄ.
3-637a

16 NOV 2011
AM

891.99
Կ-34

ԽՍՀԻՔ

ՄԵՐ ՍԻՒՐԵԹՆԵՐԵՆ

2110

Գիրքի ՄՆԱՅԱԾ ՕԳՈՒՏԸ ՓԵՍԺԵՅ ԿԱՆԵՐ
ԹՈՓՖԻ ԴԻՒՂԻ ԱՅՆ Զ-ՀԱԱՆՈՐ ԱՋԱԿԵՐՑ-ԱՋԱԿԵՐՑԱ-
ՀԻՆԵՐՈՒՆ ՈՒՄՄԵՆ ՀԱՄԱՐ, ՈՐՈՇ ԾՆՈՂՆԵՐԸ
ԳՆԱՅԾ ԵՆ ՀԱՅՐԵՆԵՔԻ ՊԵԶՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԱՐԻՒՆ ԹԱՓԵԼՈՒ:

Нахичевань на-Дону
Пар. тип. С. Я. АВАКОВА

1915

ՆՈՐ-ՆԱԽԻՁԵՒԱՆ
ՏՊ. Ս. Յ. ԱԽԱԳԵԱՆ

08 MAY 2013

34333

ԱԶՆԻԻ ՊԱՇՏՈՆԱԿԻՑ

ՎԱՐԱՄԵԴԻԿԻ

Բ Ա Ղ Դ Ա Ս Ա Ր

Մ Ե Ս Ն Ի Կ Ե Ա Ն Ի

ԱՆՄՈՒՋ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Կեանիյ մաշեցիր մատսդ սերունդի
Կրութեան զործում, բայց երախտիի
Նշոյ մը անզան ազգեդ յը Տեսար
Ով ազնիւ ընկեր ո... մենակ մեռար:

Հանգիս ոսկերացդ, Բաղդասար եղբայր,
Որ Տարի ծանր զործդ օգտակար.
Մանուկ սերունդը իր նրա խորժում
Միշտ վառ կը պահէ յո ազնիւ անուն:

ԽԱՍԻՐ

ՍԵՐՍԼԵՄԸ.

...Կորաւ սերսէմը:

Ելք թուրքը համարձակուեցաւ մեծազօր Ռուսիոյ դէմ գէնք բարձրացնելու՝ մէկ քանի անպաշտապան բաղաքներ բամբանտիովաթ' անելովը և սկսուեցաւ էրկու տէրութիւններուն մէջը արիւնահեղ պատերազմ՝ աղկից քիչ էաւ սերսէմ Կարօն կորաւ...

Նարա ծնողները շատ ասթին-անթին վազեցին, շատ շէմեր մաշեցին, բայց նարա տեղը գիտցող, նարա տեսնող չը կար ու չկար:

Ո՞վ էր սերսէմ Կարօն և վըտե՞խ կորաւ՝ լսեցէք, պատմիմ:

19... թուականն էր... Տաճկահայաստանը սուզի և արիւնի մէջ էր, ամեն մէկ լեռ ու դաշտ, տէրաթէփէ ներկուած էր անմեղ հայի արիւնով... հայոց դաշտերու ծաղիկները սնունդ կառնէին հայի արիւնէն...

Տաճիկ կառավարութիւնը րեն ոխը կը հանէր անպաշտապան հայոց գեղերէն... նացա արիւնկզակ զինւորները բաղցած գաղանի պէս աս գեղէն ան գեղը կը վագէին՝ չորսդին մահ ու աւերմունք փուելով..

Հայի գեղերը մէկը միւսին էտեէն կերէին, գաւարները կը տանէին, հարստութիւնները կառնէին, իսկ մարդոցն ալ սկսած պէշիկի երեխայէն մինչեւ վերջը սրի կանցունէին... կինմարդոցն ու կենջ աղ-

ջիկներուն զերի կը վերցնէին՝ իրենց մեծերուն փէշ-քէշ տանելու համար...

Աս խութուզներէն շատ քիչերը կը կարողանային սահաթ մը առաջ փախչել՝ թողնելով տուն, տեղ ու հարստութիւն ադ գազաններուն լափելու համար:

Ամառ էր. Դ... գիւղը սաղ օրուայ աշխատանքէն յոգնած՝ խաղաղ քուն մտիլ էր...

Կարօն, որ 23 տարին նոր թամամցած՝ առողջ կազմուածքով տղայ էր՝ ցորեկւան աշխատանքէն յոգնած խորունկ քուն մտիլ էր ու երազին մէջը իրեն քովը մօափիկ նստած կտեսնէր իր սիրուն նշանուածին՝ աննման Մարօյին, որը այդ ժամին գուցէ նոյն երազներով կապրուէր...

Սաղ Դ... գիւղին մէջը Կարօն մէկ հաս էր, մատով ցուցներու էր թէ րեն վարք ու բարքովը և թէ բոյ-բոսով, տեսքով ու քաջութիւնովը... շատ մայրեր կուզէին, որ Կարօն իրենց փեսայ ըլար, որ նարամով կրնային պարծենալ ուրիշներու մօտ, բայց խօայդ ամենուն բաժին չէր կպչէր...

Նարա սիրտին պարկած աղջիկը աղքատ ծնողքիդաւակ Մարօն էր, որ իրեն տեսքովը գեղին մէջ մէկ հատ էր...

Կարօյի ծնողները թէև հարուստ էին, բայց և այսպէս չուզացին րենց մինուճար որդուն սիրտը կոտրել ու նշանեցին: Հարսնիքը նշանակուած էր 3 ամիս յետոյ, երբ ամենքն ալ գործերէն կը խալսէին ու հանգիստ կը նստէին տուները: Նացա երկուակն համար ալ այդ երեք ամիսը երկար տարիներ կըթւար և շատ անգամ Կարօն միտքէն կանցունէր, որ ինքը մուրատին համելու չէր, բայց ի՞նչ պատճառով ադ ասել չէր կրնար:

Աղ երկար ու ձիգ Յ ամիսէն 2 հատը աշդիս կը լորիլ էին նաքա և մնացիլ էր միայն մէկհատը՝ անալ ով գիտէ ի՞նչքան երկար, ի՞նչքան ձանձրալի...

Յանկարծ թուենքի մէկ խուլ ձայն լսուեց...

Կարօն թուաւ պարկած տեղէն՝ մէկ լուպէ կորաւ նարա միտքէն երազներն ու Մարօն... նա դուրս վաղեց և ի՞նչ տեսաւ՝ րենց նոր լնծած ցորենները ալէֆիէմիշ ըլվալէն կըվառւէին. սաղ գեղը գենեռ վառածի պէս լուս ժառագ կառիլ էր...

Առանց միտք անելու ստքը բոբիկ, զլօխը բաց Կարօն սկսից վազել դէպի ժամը և սկսից ժամին չանկը եանդընի չանկի պէս զարնել:

Սաղ գեղը սաքի էլլաւ... բէշիկի տղէն մինչև ալեսրը: Իսկ մինչ այդ թուենքին ձանելը քանի զնաց մօակրցաւ ու շատցաւ... Հալխը իմացաւ դուլիսուն գալիքը՝ ժողոալից բարաչաղան և սկսից գեղէն փախչել: Ովկ կըկնար վազել՝ կըվազէր ու զլօխը կադատէր, իսկ ով չէր կրնար՝ կիյնէր վար՝ հալխին ոտքին տակը և հոն շունչը կըփչէր:

Կարօն ժամին դուռէն վազից տուն՝ առաւ հին սիստեմի թուենքը և դաշոյնը ու ծնողներուն հետ աշխատից սահաթմը առաջ գեղէն փախչել...

Երբ գեղին մէկալ ծարը հասան՝ Կարօն պարզ կերպով տեսաւ, թէ ի՞նչպէս ոտքերէն զլօխները զինւած թուրքերը սկսեցին մէմէկ-մէմէկ բոլորին տուները կրակ տալ, առաններուն դուռերը բանալ ու դաւարներուն քշել տանել... Տեսաւ նոյնպէս թէ ի՞նչպէս թուրքերէն մէկը կոտրից րենց առանին դուռն ալ, հանից բոլոր եղերուն ու ձիերուն, առչել ձգից ու քից տարաւ... Տեսաւ՝ թէ ի՞նչպէս տաս տասնը-

հինգ հոգի աւազակներ լենց տունը մտան՝ բոլոր ունիմ, չունիմ իրերը հանեցին՝ լենց կառքին վրան բարձան ու տարին...

Տահա խիստ շատ բաներ տեսաւ կարօն, բայց չուզէր հաւատալ լեն աեսածներուն...

Յանկարծ կարծես քունէն նոր զարթած՝ վեր թռաւ կայնած տեղը ու հազիւ կրցաւ ասել «Մարօս».— ծնողները սկսեցին համոզել նրան, որ Մարօն արդէն փախած կը լայ իրեն ծնողներու հետ .. բայց կարօն չուզաց հաւատալ նացա և չորսդին չնայելէ անցաւ գեղի սոխախներով գէպի Մարօնց տունը... բայց մինչև նարա համելը աւազակները լենց գործը տես- սիլ էին... Մարօնց տունը ալէֆին մէջը կորած էր... Կարօն խելի պէս ներս թռաւ կոտուած վենջերէէն ու մուխին մեջը ջորովէն կրցաւ ջոկել Յ հատ մար- դու մարմին քովէ բով շարած...

Երբ Կարօն ժամկը քաշիցնը՝ ան ժամա- նակ թուրքերը աշդըս հասիլ էին Մարօյինց տունին և տունի էղած բաները տանելներէն եաքը՝ կուզէին Մարօյին ալ տանել լենց բէկերուն վէշքէշի համար.. . բայց Մարօյի ծնողները չուզէին, որ այդ անիրաւ- ներու պիղծ ձեռքերը կպչին լենց մինուշար աչքի լոյս զաւակին՝ ու յաւիտեան բաժնըւէին նարամէն՝ ագոր համար Մարօյի հայրը՝ հաղդանդամ կափօն կացնի մէկ հարուածովը գետին կորից Մարօյին քաշըուակող թուրքին ու տեղն ու տեղը ճամփից Մահմեդի կուշը, բայց մէկալ թուրքերը տեսնելով այդքան մեծ յամարձակութին կափօյին սեմթէն՝ իս- կոյն տեղն ու տեղը սպանեցին թէ լեն և թէ խեղճ կնկանը, իսկ Մարօյին՝ ականջ չդնելով նարա լաց ու կոծին ու դիմադրութեանը՝ առին տարին հետերը...

Ահա այդ Յ մարդու դիակներն էր, որ Կարօն տեսաւ... նա այդ ժամին կարծես կուզէր տեսնել և Մարօյի դիակը այդ մուխով իլինք տունին մէջը և դրա համար երկար ասթին-անթին ման էկաւ՝ խել պէս ամեն ծակն ու ծուկը նայեցաւ, բայց Մարօն չկար ու չկար...

Ալ Կարօն ինքը ըեն բոնել չկրցաւ՝ սկսից բարձր ձայնով լալ ու անիծել այն օրը՝ երբ ինքը աշխարք էկիլ էր...

Քիչ ագէնէն Կարօն խելի պէս դուրս էկաւ ար- դէն բոլորովին ալէֆլէմիշ էղած տունէն ու սկսից փախչել...

Ինքն ալ չխաէր վրտելի կերթար և ինչու կեր- թար...

Կոտորածն ու աւերմունքը հանգարդուելէն եա- քը Դ. գեղի բնակիչներէն որը սաղ մնացիլ էրնը՝ նորէն դարձան ըենց տուները, Բայց տուն մնացիլ էր ինչ գեղին մէջը, սոխախը ազբարէն կը ջոկուէր ինչ. ալայը մէմէզիկի խառնըւած, բարը քարին վրան մնացած չէր... մէկ հատ սաղ տուն մնացած չէր, որ հալլը գար ու մէջը լցուէր, բիչմը հանգստանար... ալայը տակէն վեր մոխիր դարձիլ էր ..

Իսկ ապրանքները բոլորը կրակին մատաղ գնա- ցիլ էին...

Սաղ գեղին մէջը մէկ կտոր մը հաց մնացած չէր, որ գոնէ սաղ մնացած փոքը երեխաներուն տային ու քաղցածութիւնէն ազատէին. .

Կարօն ան գշերը խելի պէս վազելէն՝ չխախմ վրտելի կերթար՝ կը համնէր, էկէր հրաշքով մէկ փսսի մէջ ընկած չլարնը... մէկալում օրը շատ ասթին ան-

թին փնտուելներէն ետքը ծնողները գտան նարա ադ փոսին մէջը ըկած, ոտքը բորիկ, գլուխը բաց, սաղ էրէս սուրաթը արնոտ...

Առին հետերը գեղ տարին լւացին թեմըզուցին վրան, բայց երբ սկսեցին նարա հետ խօսել՝ նա տպուշ կարած ջէմը էրէսները կնայէր ու ձեռքով ոտքով նշաններ կանէր... խեղճը խեղը թուոցիլ էր... կարծես թէ լեզուն ալ կատուիլ էր...

Դ... գեղացիք թօփ էղան, ամենքը ըեն դիտցած ջարն ու հունարը թափեցուց կարօյին գուլխուն, բայց մէկհատ բան ֆայտայ չունեցաւ... կարօն մնաց լուռ ու ապուշ... գեղացիները խորհուրդ արին ըենց մեռելներուն թաղել ադ աւերակներուն իբրև պահապան, իսկ ըենք ալ էրթալ դէպի աղատաւթեան աշխարքը՝ Ռուսաստան...

Սյդպէս ալ արին... մէկ էրկու օրէն ետքը Դ... դեղի սաղ մնացած մարդիկը ըենց ընտանիքով «մնաս բարեւ ասին ըենց ծնուած ու մնուած գեղին ու գլուխները կախ, լուռ ու մունջ սկսեցին խումբովին էրթալ դէպի Ռուսաստան...

Կարօյի ծնողներն ալ էկան Ռուսաստան և բնակուեցան հայի գեղերէն մէկին մէջը...

Բայց որքան դառն էր նացա համար այս նոր կեանքը...

Թէս նացա միշտ կօգնէին այդ գեղի հայերը, բայց որքան դժւար էր նացա համար այդ արուած ողորմութիւնները առնել և ուտել... մէկ կողմէն այնքան հարստութիւնէն բաժնըւելը, մէկալ կողմէն ալ ըենց մինուջար տչքի լոյս զաւակին խենալը նացա անասելի ցաւ կըպատճառէր և ամէն մէկ կուլ ասւած հացին հետ կարծես ֆունտերով աղու կուլ կուտային... բայց ինչ կուգար ձեռքերէն. աշխարքը ու-

ժովինն է, իրաւունքը հզօրինն է, տկարը պէտք է լուռթեամբ տանէ հզօրի արած անիրաւութիւնները և միայն ասէ «ճակատիս գիրն է, պէտք է տանեմ»:

Իսկ կարօն օրերով տունէն կելլէր ու կըթափառէր չոլերը... մանառ տղաքը սաղ օրը հետը էրէշմիշ կըլային, մսխլի կասնէին ու էտեէն կըկանչէին՝ «հանա սերսէմը էկաւ, հանա սերսէմը զնաց» և այն: Կարօն այդ գեղին մէջը կնքըւիլ էր Սերսէմ անունով:

Գեղին մէջ շատ քիչերը գիտէին նարա պատմութիւնը ու ադոր համար ալ նարա մեղքըցող խիստ քիչ կար:

Բայց երբ Ռուսաստանի ու Թուրքաստանի մէջ սկսուեցաւ պատերազմը և Կարօն մէկէն խայիք էղաւ՝ սաղ գեղն ալ սկսից հետաքրքրուելու՝ թէ վրտելի կորաւ Սերսէմը, ինչ կարող էր գալ նարամէն:

Շատերը թահմին արին, որ նա ով գիտէ որ ետքէն վար ձգից ինքը ըեն ու մեռաւ, չոլի գազաններն ալ էկան մարմինը կերան ու աղպէսով իզը, թողը կորաւ...

Ծնողները շատ ասթին անթին վագեցին, վերջապէս 6 ամիսէն էտեւ իմացան, որ ըենց որդի կարօն հայ կամաւորներու խումբին մէջն է..

Նա այլևս առաջւան սերսէմ կարօն չէր... նա այժմքաջ, անվեհեր կարօ էր, որի առչեւթուրքերը կը դողային... նա գնաց թուրքերէն հանելու ըեն այսքան տարուան հաւաքած ոխը... նա գնաց թուրքերէն ետ դարձնելու անպատուած անման Մարօյի պատիւը... և ամբողջ հայ ազգի այսքան տարուան անարգւած պատիւը ոտքի կանգնելու և ազատելու հայոց երկիրը այդ գաղաններուն ձեռքերէն ..

ՍՈՆԻՉՔԱՅԻՆ ԹՆԻԺՑԱՆ

Միամիտին Ասւատուրը քանթոռքային դիմացը նստած, վիրայ չօթքիլն մատերը կըձգէր, բենի է, որ բան հետապ կանէր: Տասը, տատմուհինդ մինութ շախք-շուկը ձղից զայէր չօթքին՝ անկից ջեպէն հանից ծոցի քնիժքան ու մէջը քառանտաշով նշան արտ չօթքիլն վրան ցոյց տրուտծ ցիֆոան՝ 525 րուբլի 15 կոռէկի, ոռումմին թեփէնալ ոռուերէն վրից «приходъ» խօսքը:

Անկից նորէն խորկընցաւ հետապին մէջը ու պաշայից նորէն վիրայ չօթքիլն մատերը տեղյունել, հինգ մինութի խարեր ձգելէն ետքը կանգ տռաւ, մատը ճակատին վրից, պըյըլիէն մէկ քանի թել կոծից քոքով հանից ու ինքնիրէն բան փսփսալէն՝ տեղէն էլլաւ, կնկանը բարձին տակէն քամօտին բալիքները առաւ ու բացից քամօտին աչքերը. շատ քրքրելէն ետքը վերջի աչքի էնկի խորունկ քօշաներէն գտաւ րեն ուզեցածը. այդ մէկհատ պղալիկ քնիժքա էր, որին մէջը Սօնիչքան կըդրէր րեն ամսական խարջերը: Ասւատուրը կնկանմէն շատ ուզացիլ էր ադ քնիժքան, բայց Սօնիչքան միշտ վրան կտաջի բերելով ադ վորցանիքնիրէն խալսիլ էր:

Երբ կնկանը քնիժքան ձեռքը ընկաւ Ասւատուրին սիրտը մէմը շուկ'վ արաւ, գիտիսքի արած դողութինէն ինքն ալ վախեցաւ. բայց կենէ ինքը րեն ուժ տըւից, մօտկըցաւ բանթոռքային, բացից քնիժքան ու պաշայից հոնի գրած ցիֆրաները չօթքիլն վրան ձգելու...

Թամամ սահաթ անցնելէն ետքը ջորովէն ծար էլլաւ ադ բարձրան սչեթավունի գիրքը և երբ որ ստած ոռումմին վրան նայեցաւնը սէս-մէս էղաւ,

ուաղ քրտինք ղարկից ճակատին վրան, միտքէն շատ քէշ բաներ անցաւ, համա բերանէն չըհանից:

Ալզի րեն ծոցի քնիժքան նորէն բացից —առաջւան գրած ոռումմին սաղ սէմմթը գրից չօթքիլն վրայի սումմը՝ 900 լ. 75 քապիկ, վրանալ գրից «расходъ» խօսքը:

Երբ «расходъ»-էն «приходъ»-ը հանից՝ նորէն սէս-մէս էղաւ, աշգրին ինքը րեն բռնել չկրցաւ ու ու ձանին կորա սաղ տունով մէմը պաշայից կանչելու ու ասելու՝ «удивительное дѣло» քառսուն տեղ պաշտօն կըվարիմ, սաղ օրը նստած տեղս աթոռքին կըկալչիմ և էղած չէղածը ամսական կառնիմ 525 րուբլի 15 քապիկ, որիմէն ուտելու ու ծառայողներու համար կըխարճիմ 150 րուբլի, ամսական իմ վրաս ալ կը խարճիմ 50 մանէթ, հապա մէկալ 325 րուբլի 15 քապիկը կնկանլու խարճելու չօգտիլ մէկէրմը...

Զէ, աստեղը մէկ աշխիվկա բան կայ, սասաց Միամիտին Ասւատուրը, անկարելի է, որ իմ կնիկս ամիւլ 700 րուբլի 75 քապիկ իրեն վրան խարջ արած ըլայ, վերջապէս աղքան ստակ գա վրտեխէն գտաւ, չէ որ հախէս ամսական կըմնայ ճէմը 325 րուբլի 15 քապիկ, մնացած 376 լ. 60 քապիկը որիմէն կառնէ դա:

Զէ, չէ, ես սխալ իմ, անկարելի բան է ասոպէս մեծ նետառազումենի, սասաց միամիտին Ասւատուրը ու աղէկ փսավեռեաթ՝ անելու համար պաշայից ամիսուան ծարէն մէկիկ-մէկիկ կարդալսւ առած բաներուն անունները ու սումմերն ալ չօթքիլն վրան ձգելու:

«յունիսի 1-ին 4 ճիփթ աժոււնի չուլը» (заграждничные) 8 լ. —

«յունիսի 2-ին ½ դիւժին զակուանիչնի լիֆ-
շիկներ 15 ր. —

«յունիսի 3-ին 4 հատ շենապ թանգնոց փեռո-
ներսվ 200 ր. —

«յունիսի 4-ին 2 կտոր լուացուելու սա-
պոն 2 ր. 40 կ.

«յունիսի 5-ին 2 ֆլակոն զակուանիչնի դու-
խի 15 ր. —

«յունիսի 6-ին 2 քառօփկիա փուտոփի 4 ր. —

«յունիսի 7-ին 1 քառօփկիա շկալատ 5 ր. —

«յունիսի 8-ին բարձրացած էն առի պլուզկայի
կտոր 20 ր. —

«յունիսի 9-ին փլաթիցու 30 ր. —

«յունիսի 10-ին փլաթիս կարելու 80 մն. —

«յունիսի 10-ին պանիք էշտալու 5 ր. —

Թփնւ, ես քու կինմարդուդ... ասաց Միամիտին
Ասւատուրը կնկանը քնիֆքան գետինին դարնելով.
ասքան ալ խարճ կլլայ... ասօր բան կօգտի...
Աջափ էղէկին կնիկն է ինքնալ... չըփլախ ու
քալցած մանէկածը մոռցիլ է ալալէմ...

Անկից դուռը շառթ արաւ կոնկի բաց ձգից ու
էղած ձանովը կանչից՝ «հաքա Սոնիա հսու արի». բայց
ձանին ձան տւող չգտնելով սիրտուած դուրս էլլաւ
ու դիմացը էլլող բանւորին վրան մէկ կանչմը դրից
որ մախսումը սէս-մէս էղաւ ու պատին գամուեցաւ:
«Թանիա, վրաՅին է Սոնիան»... Մախսումին լեզուն
բերանը կապուիլ էր, չէր կընար աղային հարցին
պատասխան տալ, զերէ 4 տարի է նացա քովը կը
ծառայէր՝ առչի անգամն էր, որ աղային ասպէս սիր-
տուա, սիրտու կալաճի արածը կըտեսնէր...

«Հաքա չիս լիլ, եանկադ վրտեխն է» ասաց

աւելի սիրտու մախսումին վրան կանչելէն ու ոտքը
դեաինին զարնելէն...

«Ռաստովն է» ասաց ջորովէն մախսումը ու
զլիի փախաւ դուրս...

«Ռաստովն մէնչ գործ ունի Ռաստովը... Ես նա-
րա կըսորվեցունում» ասաց Միամիտին Ասւատուրը,
զլիի մտաւ նորէն րեն սենեակը, պաշլայից վար-վեր
քալելու... երբ սիրաը քիչմը ինչածի պէս էղաւ, վար
էղաւ կնկանը քնիֆքան առաւ «բաղնիք» խօսքին վրան
նօմայ միտք արաւ, զէրէ տունը վաննի ունէր, լուա-
ցուելու համար բաղնիք էշտալ պէտք չէր, անկից մէկ
քանի դապաղայ թերթից ու պաշլայից նորէն կար-
դալու»

«յունիսի 25-ին Մաշոնկի-ին թեատր-ը 10 ր.


«յունիսի 25-ին թեատր-ին մէջ խարջ 5 ր.

Էյ շունս աճըուէ բուկիդ մէջը... սա մէնչ բան է...
աս կինմարդը օրնաւոր ինձի խելի տեղ դրիլ է...

Անկից քիչմը կանգ առաւ, միտքի պաթեցաւ ու
մէկէն ի մէկ քունէն զարթածի պէս տեղէն վեր ցատ-
կեցաւ ու ասաց՝ չէ, անպատճառ ուազվու պիտ տամ,
ասպէս անկարելի է ապրուելը... որին հետ թատրոն
գնացիլ է դա, որին հետ այժմ Ռաստով կըքալէ...
չէ, չէ ես խել չիմ, ես չեսթինի մարդ իմ, չուզիմ, որ
իմ կնկանմէս ուրիշները օդալուին... ես... ես...

Անկից անքով աշդըլս ինքը րեն չիտէր Միամի-
տին Ասւատուրը... դիւանին վրան ընկած վիրա էտև
էտևի կասէր ու ասածը ինքն ալ չէր հասկընար ինչ
էղածը...

...Կէս սահաթէն կնիկը խունդում էրէս ներս
մաւաւ... տեսաւ էրկանը խիստ խասելթի պաթածնը
քիչմը վախեցաւ...



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

արշէ շատ ֆենտըլը էր .. համան վազից էրկանը քու-
վը, վիզին փաթթըւեցաւ ու պաշայից պլոխէն ու
էրէսէն շոյել...

Թեձյ, հոգիս, ի՞նչ էղիլ է ասօր քեզի, աղէկ չիս
ի՞նչ է, վայ քօռանսա աչքս, ի՞նչ էղաւ քեզի... հէքիմ
ձան տամմ... չըլայ թէ քէշ ցաւով գառազիթցա էղած
ըլաս... ասպէս կըլայ շոէ միշտ ալ... էլլայ մամայիս
տունը գնացի քիչմը... ոչ լար չեշդայի պէքիմ... մաշ-
զըս հոս ձեռքէ կէշդայ տնիսէ...

Թանեա, թանեա, շուտ արա զնա մեր հէքիմին
ասա թող դայ... ասա որ Թեօրէ Ակիմիչը ծանտո
հիւանդ է, շուտ թող անէ թող դայ...

Աղջիկը թուաւ զնաց... դուրսը մթնելու վրայ
էր...

Սոնիչկան համան դոշակ եօուզան հազիր արաւ,
Թեձյ-ին զուով հանից տեղէն տարաւ դոշակը պառ-
կեցուց, վրան ալ էրկու խաթ եօուզան ծածկից...
խեղճ մարդը հիչ չուզէր պառկել համա կնկանը տե-
սաւնը միտքը փոխուեցաւ...

Քիչ աղէնէն Սոնիչկան դուռերը զոցից, փենջե-
րէներուն խափախները փակից ու...

Մինչև հէքիմին գալուն Միամիտին Աստատուը
աշղըլս ոտքի վրայ էր... հիւընդութինը ալայ-մալայ
անցիլ էր... մարդը սափեմ ուրիշ մարդ դարձիլ էր...

Նա ամեն բան մոռցաւ, կնկանը քնիժքանալ
թատրոնն ալ, բաղնիքն ալ՝ թէմիդ մոռցաւ... շինտին
հարա միտքին մէջը միայն մէկ բան կար՝ ինչպէս
անէր, որ կնիկը տունէն դուրս չելլէր, ինչպէս անէր
որ կնիկը միշտ քովը ըլար՝ ինըլ միշտ հիւանդ, դուսն
ալ միշտ գիշեր...

ՀԱՍՏՐԱԿԻ ԲՈՒՂԱՆ.

Մեր հալիսը առհասարակ չի սիրիլ ան բանը, ինչ
որ շատերը չին սիրիլ. էկէր թէնքուզին մէկը էլլէ
ասէ, որ ձեր չըսիրած կամ չընաւնած բանը «աղէկէ»՝
ադ սօյ մարդուն մեր հալիսը թախ Գողգոթայ կըհանէ
խաչելու և ան մարդն ալ ինսա անիծուած, հալիսէն
քէշ ասուած առարկային շարքը կըմտնէ... բայց խօսքս
թամամ անելու համար պէտք է ասիմ, որ իդա հալ-
ին չը սիրոծ բանին «աղէկէ», «էրկելի է» ասուզը
էկէր զէնկին ըլայ, կամ թէ կունելու մէջ մէկքանի
հատ Սաթայէլին կուշոը ճամփած մարդ ըլանէ՝ սաղ
հասարակն ալ «խոշդ աղէկէ գիտի՞ս», կամ թէ «որը
ասկից աղէկ է որ» կասէ. ու ագպէսով ան բանը, որ
մէկ մինութ առաջ հալիսէն վեռասա, անպէտք ճանչ-
ցըւած էր՝ շինդիս կը դառնայ «աղէկ», «էրկելի» ու
«անթիքայ» մէկ բան:

Մեր հալիսին մէջը ասաւ մէկ չէշիթ հիւանդու-
թին է գիտի՞ք...

Շատ չէշիթ հիւընդութիններու անուն գիտիմ,
համա ասոյ հիւընդութինի անուն լուած չիմ, չիտիմ
ադոր անունը ի՞նչ է:

Իսկ և իսկ ասպէս հիւընդութինի ու քէշ ցաւի
հանդըպեցաւ Խուզուսպան մահայի օշդայի բուղան,
որի պատմութիւնը շինդիս ես պիտ անիմ:

Այդին թառամայէն գտնուած բուղայ էր... ան
ժամանակը ի հարկէ բուղայ չէր՝ դանա էր: Խու-
զուսպան մահայի հալիսը գտիլ էր նարա. երբ որ
ամեն վօլոսթները զաեավիթ՝ արին և տէր էլլող չե-
ղաւնը՝ թողուցին ըենց մահային մէջը և պաշայի-
ցին օշդայի ստակով նայելու...

Ամառը ստակով դաւարին մէջը կըխառնէին,

իսկ ձմեռը սրայով ամենքն ալ կընայէին ըենց դաւարներէն մնացած սանթըլսով. աղպէս նայւած հայվանին հալը ի՞նչ պիտ լար... սաղ ձմեռը կանցընէր՝ հայվանը խաշաղիի էրես չէր տեսնէր, պառկած տեղն ալ խօմ հիչ չոր չէր ըլար, աղոր համար ալ երբ պահերին չոլ կելէրնը օրնաւոր գոմէշի բալայի կըրմանէր. ալայ քովէն եափաղինէրը կախկըխուած՝ չտիւմախոտ ու մէկ անջունի բան մը կըլար...

Դաւարին մէջը հայվան չիկար որ նարա չըվախցունէր ու օրւան մէջը մէկ քանի տեղ եարա չանէր վրան. աղոր համար ալ խաթուանն ու քառտովքանալ նարա վրայէն միշտ անպակաս կըլար... Օքսուզ տղան ի՞նչքան աղէկ օր կունենայ, որ աս անտէր հայւանը ունենար:

Բայց Աստուծով բան էր զայիր, աղի զանան օրէցօր առաջ կերթար, շնչքի կըմանէր:

Երբ Յ-ը թամամ արաւ Գ-ը մտաւ՝ օրնաւոր շէնքով բուզայ դացաւ... Խուզուսպան մահլայի հալիսը որոշեցին ու. Գէորգին մաստաղ աներ, բայց բանիմը օր անցնելէն ետքը միտքերը փոխուեցաւ ու թողուցին նարա իբրև մահլայի բուզայ... Զունքիմ էրկուժեք տարի պէտի հավայ նայի էիննը՝ աղոր տեղը ուզացին նարամէն ալ մէկ ֆայտայ մը տեսնել... ու թողուցին դաւարին մէջը, որ էկող տարի ըենց կովերը մէմէկնատ բզով փէշքէշ անին ըենց, աղոր համար ալ մեմալ խարջ չարին ու դարա շամիշ էղած ուրիշ բուզայ չզնեցին:

Բայց մէր բուզան, որ աղքան տարինէր սորված էր լանքին-բօյին կենալ՝ աղքան կովին հետ մաշուելու դիօխ ունէր ի՞նչ, գէրէ որ խամ եղին էրկու օր վրայ-վրայ լծիսնը աշդըլս հալէն կիյնէ ու կըյողնի...

աղպէս ալ մէր բուզան... մէկ էրկու օր կովերուն հետ դաւարը գնաց զայիր, անկից տեսաւ որ աղքան բան կառավարելը բեն ուժէն վեր բան է՝ միտք արաւ աւելի խօլայ բան... տմէն օր դաւար քշած ժամանակները մարդոցմէն գաղգուկ կըմուանէր չեթի խոտնոցները, սաղ օրը կուտէր խոտը մինչև փորը փաթլամիշ ըլալու չափ, անկից իրկւան ալ դաւարին հետ նորէն գեղ կըմանէր... և աղ նարա համար դարցաւ սովորական բան:

Հալին ալ կը կարծէր քի սաղ օրը նա կովերուն հետ է ու բեն գործը կընայէ. աղոր համար ալ երբ իրկւան կովերուն հետ զեղ կըմանէրնը ամէն մարդ աղ սիրով կընդունէր նարա ու կըփակէր բեն կովերուն հետ մէկտեղ, առջեն ալ մէկ սեփէթ աղէկ բլով կըլցնէր...

Խօսքս ի՞նչ էրկնցնում՝ ամտոր անցաւ, դաւարը տուն էկաւ. աշըլս գուրսը պաշլայիլ էր թաթաւ ու չամուռ: Կովերուն խոթեցին առանները, իսկ բուզային տուլն մէկ հատ օրնաւոր մարդու զիմովքայի, որ դարա նարա դաւարին առչելն մնացած սանթըլով պահեր չելէ ու ուժէն ընկած չըլայ...

Մարզը պաշլայից պէտքին պէս նայելու...

Բայց որքան մէծ էղաւ Խուզուսպան մահլայի հալիսին զարմանքը՝ երբ աղ ձմեռ նացամէն մէկհատը բզով չունեցաւ, կարծես աղային կովին արգանդը մէկէն փակուիլ էր ու խօսք մէկ էղիլ էին նացաւանց կաթի թողցունելու... շատերը պաշլայեցին բուզային վրան կասկածելու, բայց մէկքանի հատնալ կայնիլ էր կասէր, որ աղքան կովդայով բուզան անհնարին բան էր, որ աղքան նեսփասոպնի ըլար: Ճենկերուն վերջ դնելու համար կանչեցին թուվարջի

բոռ Մանասէին, որը օրը ցորեկով թեն ճամփան չէր գուտնէր, շաշմիշ կանէր ով դիտէ որ տէրան կիյնէր. դարա հարցուցին բուղային մասին... նայեալ ի՞նչ պիտ ասէր խեղճ՝ էկէր ասէր բուղան միշտ կըփախցունէր կովերուն - սուտ ասած պիտ լար, զէրէ հիշ տեսած չէր ինքը, էկէր ասէր չէր փախցունէր - կէնէ սուտ ասած պիտ լար, որովհետեւ ադալ տեսած չէր... ի՞նչ կըմնար ասել. շատ հարց ու փորձ անելներէն ետքը նա ասաց, որ բուղան անթիքայ բուղայ է, բայց քիչմը թեմպելուս է:

Հալիսը հաւատաց քոռ Մանասէին խօսքին ու ադ ամառ ալ թողուց բուղային դաւարին մէջը...

Բայց ադ տարին ալ նոյն բանը կրկնեցաւ և խեղճ Խուզուղան մահլայացիք էրկու տարի բզովի էրես չըտեսան:

Երբ ադ տարին ալ ադպէս խափուեցաննը աշդ զըխ իմացան, որ բուղան բուղայ չէ, հապա եղ է, Որոշեցին նարա և Գէորգին մատաղ անել. շատերն ալ անպէս թահմին արին, որ ադ փորձանքը և Գէորգը խրկիլ է թենց գուլխուն անոր համար, որ արած խոստումները չկատարեցին. շտէ այժմ որոշեցին մորթել ու և Գէորգին գուռը տանել միսը փայտանել:

Ադ ձմեռն ալ խեղճ բուղային կէնէ ջոկ մարդու քով զիմովքայի ձգիլ էին: Երբ հալիսը գնաց մարդուն առանը բուղային վրան նայեցաւնը՝ բերաններուն ջուրը գնաց:

Ի՞նչպէս միս կապիլ էր աջափ ալղի վատուժ բուղան, փոեամը ճանչնալու բան չէր: Աչքերէն ալէփ կըթափէր, իսկ կերտանը հայ հայ գետինին կըքսուէր...

Մարդուն խնդրեցին, որ մեմը գուս հանէ ալայն ալ տեսնին բուղային շէնքը ու իրենց մնաս բարել ասին:

Մարդը օկուզբաշիէն բոնած տահա գուսի շէմին հասած չէր, ալղի բուղան գուսի լուսը տեսածովը մեմը խաղըսմիշ արաւ օկուզբաշին, մարդուն ձեռքէն սրվթուեցաւ, էրկու կոտոշով ալ մարդուն էտեկի սեմթէն առաւ, վերուց գետին զարկից ու... դրիխոնը գտիր...

Հալիսը լեզապատառ էղած որը փախաւ, որնալ պաշլայից սիրալ անցած բուղան նայողին էրէսը ջուր անել ու էսը զօխը բերել.. այն ինչ բուղան կորաւ...

Խուզուղան մահլայի հալիսը խիստ թոեվօժիթցա էղաւ...

Բուղային փախածին անքան չէր թուֆթուփային՝ ի՞նչքան որ կըմեղընային թենց ակքան տարւան էմէկին ու խարջած ստակներուն... ախու ադոր տեղը բուղան նացա ի՞նչ օգուտ առւիլ էր... զոնէ մէմէկ կտոր եղու միսէն պիտ ուտէին՝ անոր ալ արժանի չեղան...

Ամեն տեղ զաեավլենի տւին, որ աս տեսակ նշանով բուղայ գտնողը թենց թող բերէ. բերողին 50 մանէթ ստակ.. թէկ բուղան ինքն ալ ադ տարիները 50 մանէթէն տւելի չէր անէր, բայց նաքա ստակ չէր մեղքընային անոր համար, որ բոնին ու խարէղները առնին բուղայէն. բայց բուղան չկար ու չկար...

Անցան շատ տարիներ...

Բուղային իզը, թողը չմնաց...

Մէկ օր մը Զիրքին մահլայի Հովարտա աղան

գնաց քաղաք շիպայներէն բուղայ գնելու համար, զերէ ինքը կըպահէր տաս-տասնընինդ հաս նեմսէի կով և միշտ ալ առանձին սօփսթվեննի բուղայ կունենար աղոնց համար: Մէկհատ բուղայ ունէր, բայց կուղէր, որ բզովները խիստ խոշոր, զաւօտակօյ ըլաշին, գերէ ունեցած բուղան թէկ աչքբաց հայւան էր, բայց ուսսիյակի էր...

Ու գնաց քաղաք զաւօտակօյ բուղայ գնելու. թօփով դաւարին մէջը մէկհատ բուղայ խիստ աչքի կիյնէր, թէ րեն գերութիւնովը և թէ տեսքովը. ահուելի մէկ բան էր. քալած ժամանակը կովդան ջորով կըշարժէր, խակ կերգանը փաշի գետինին կըքսուէր...

Խուզուսդան մահայի բուղային մասին լսիլ էր չովարտա աղան, միարէն մէկէն մէկ անցաւ՝ չըլայ թէ աս ճանավարը ալղի կորած բուղան ըլայ... բայց միտքէն հեսապ քիթապ արաւ, տեսաւ որ ան օրւանէն աշղըխ տասը տարի անցիլ էր, ինչէս կարող էր ադ բուղան տահա կինէ աղպէս շէնք ունենալ... բոնել տըլից բուղային՝ ակռաները նայեցաւ՝ տեսաւ որ էփիէի տարիքով հայվան էր, բայց անքան հաւնիլ էր շէնքին, որ ինչ ալ ըլարնէ պիտ առնէր.

Հովարտա աղան գնից ալղի բուղան...

Տարաւ տուն..

Սաղ գեղը թօփ էղաւ ադ նոր բուղային սէիր անելու, Խուզուսդան մահայի հալին ալ էկաւ..

Ճանչըցան բուղային... զանուած ու կորած բուղան էր... թափեցան վրան, որ աղէկ մը սիրտերը բաղեցունէին: Անթիէն էլլաւ չովարտա աղան, ձեռքով նշան արաւ, որ ալայը սուս ըլան... սուս էղան...

«Մարդիկ, ասաց չովարտա աղան, դուք գիտիք աս ինչ չգտնուելիք բուղայ է: աշխարքին մէջը մէկ-

հատ Ամերիկային մէջը կայ աս բուղային հարազատ աղբարը, որին էտեկն սաղ աշխարքը կըփազէ, կըփափակէ գնելու, մէմալ աս բուղան է, որը ձեր ձեռքը ինկիլ էր, բայց դուք խաթոք չըգիտացաք, քիչ մնաց պիտ մորթէիք, նա ձեր միտքինը իմանալով փախաւ ձեր ձեռքէն և այժմս ընկիլ է ինձի պէս մէկ մարդու ձեռք, որին ձեռքը ամենաթշուառ արարածը բիլէ բախտաւոր կըդաւնայ...

Ուրեմն իմացիք, որ աս բուղան անթիքայ բուղայ է, աշխարքին մէջը էրկուսումը, ով որ կուզէ տէրը դառնալ թող ասօր գայ թօռկի՝ կարող եմ ծախել...»

Խուզուսդան մահայի հալիսը բերանները բաց կնայէին, չէր հաւատային ըենց լսածին, բայց որովհետեւ ասողը չովարտա աղան էր ալայն ալ հալած մոմի տեղ ընդունեցին, ու որոշեցին ինչ ալ ըլանէ նորէն ձեռք բերել ադ «անթիքայ» բուղային...

Թոռկը բաշլայուեցաւ... բուղային գինը հասաւ 800 լ. 15 բաղիկի... ձաները մարեցան...

Հովարտա աղան կանչից՝ «որին վրան մնաց բուղան».

Խուզուսդան մահայի հալիսը հուռու արաւ առչե վազից.. բուղան նորէն նացա ընկիլ էր..

Համրեցին 800 մ. 15 քապիկը տըլին չովարտա աղային և բուղային զիօլսէն բոնած խաղալ-ինդալէն տարին ըենց մահան...

Ան մարգիկը, որոնք նարա տեսնելու բիլէ կըդանէին, աչքերուն առչեկն խափանցունելու համար և. Գէորգին մատաղ պիտ անէին, այժմ ալղի անյարգի, անճոռնի բուղային ոտքին կը փաթթըւէին, էրէսէն կըշոյէին ու մէմեզկի կասէին՝ «ինչըան անխելք էինք մենք, որ ասպէս անթիքայ բանը կուզէինք եօխ

անել» և նաքա ըենց խիստ բախտաւոր կզգային...

Իսկ չովարտա աղան էտեներէն քան, քան խընդաց ադ հալխին աղքան միամիտ հոգիով էղածին համար. 800 մանէթը նորէն համրից ջեպը դրից ու ասաց ինքնաբաւական կերպով՝ «Ի՞նչքան ախմախ է մեր հալխը, որ բերանէս էլլած ամեն մէկ խօսքը հալած մոմի տեղ կընդունէ. ադ բուղան խորդ աղպէս բան ըլաքնէ ես գացա հէջ կը ծախէր... մեր հալխը օչխար ծնուիլ է, օշխար ալ պիտ մեռնի, խոկ ինձի պէս ածերը միշտ նացա պիտ տանին ըենց հիշ չուղեցած ճամփովը»...

Մէկ էրկու տարի տահա անցաւ... Խուղուղան մահայի հալխը պասիկ աղի պէս կնայէր «անթիքայ» բուղային, թէկ նաքամէն տահա ֆայդա հիշալ տեսած չէին, գերէ ադ չգտնուելիք բուղային մեղքըցածներէն էրկու ժեք հատ տահա բուղայ զնիլ էին իբրև նաքա փամօշնիկներ...

Բգովներ շատ կունենար հալխը և ամեննալ կրկարծէր, որ ադ բգովը անպատճառ ադ «անթիքայ» բուղայէն եղած էր. բայց նաքա հիշ խապար չէին, որ ադ «անթիքայ» բուղան կենէ առաջուան անիծուած եղն էր, և նա ինչ բնութքը փոխիլ էր, ինչ ալ գործքը.. աղպէս անիծուած տեղէն մէկէն մեծ պատիւ ստացաւ մեր բուղան և մինչեւ սատկելու աղէկէն աղէկ նայուեցաւ ան հալխէն, որն որ ըեն կուղէր մորթել ու եօխ անել աշխարքին էրէսէն...

Հայվանը լեզու ունենար ու ասէր, որ ինքը չէր հայվանը, հապա ըեն տէրերն էին.

1915 թ.

Լիդական.

Լիդէկան չօխթան փոշման էղիլ էր կարգըւածին, ամա մեմը խափուիլ էր շաէ, խափուելը մէծ բան է ինչ, աղամորդիս հում կաթ կերած է խօմ:

Կարգըւածին էրկուսում տմիսը աշղըն նաքա աչքը դումն էր...

Աչքը դումն էր կասիմ տէին դուքալ մի հասկընաք, որ ինքը նեսը կընսաէր՝ սախըն. տուաւաը սահաթը 10-նի տունէն կելլէր՝ մեմալ իրկուան Շ½-ի տունը կըգանուէր. զէրէ նաքա էրիկը՝ Խութսուզին Քառփուշը՝ գործի տէր մարդ ըլալով սաղ օրը ըեն գործին կեշպար, խոկ Լիդէկան ալ «սիրախն նեղութինը» ցրելու համար կերթար ըեն գործին—«էկլէնձէի»...

Քառփուշը կնկանը արած «էկլէնձէներէն» խապար չէր, աղոր համար ալ ամեն իրկուան տուն կուղարնը միշտ կնկանը մեղքընալէն կասէր՝ «հաքա, սաղ օրը տունը նստած տեղի հոգիկ փաթլամիշ էղաւ, մաշուեցաւ, ել քիչմը քալելու էշտանը ու պրօԵտրի- ված ըլանը»:

Բայց Լիդէկան, կօյա էրկանը խիստ սիրածէն, ամեն անզամ ալ ամքազ կանէր չէր էրթար, տսեւով՝ «Զէ, Քառփուշ», սաղ օրը մէկզմէկու էրէսէ կարօտ կըմնանը, զննէ իրկուաններն ալ ըլանէ քիչմը էրէսդ նայիմ տա:

Խութսուզին Քառփուշն ալ խուզիի պէս կընազանդէր իրեն «հաւատարիմ» կնկանը և մէկ օր չէր պատահէր, որ Քառփուշը աղպէս բաներու համար կնկանը քէշ խօսքեր տէկը՝ նեղացնէր:

Բայց չորսդիի հալխը Լիդէկանին չօխթան է գրիլ էին «անհնապանդներուն» տէփթէրին մէջը. չօխթան քանի էշիթ բաներ վայլեցուցիլ էին վրան, խոկ Քառ-

փուշը բէխապար էր՝ նա ըեն կնկանը հրեշտակի տեղ
դրել էր ու առջեր մոմ կըվառէր...

Մարդը ինչէս քէշ բաներ թող անցունէր միտ-
քէն՝ քանի որ կնիկը միշտ ըեն տունը էղած ժամա-
նակը՝ պուտուտին ման կուգար ու լէսլպէյիմ կայնած
էր ամեն ժամանակ...

Մէկ օրմը նա կնկանը թութու էրէսով, եա չէնէ
գանգատով դիմացը էլածն ու կերած-խմածը հարած
արածը տեսած չէր. կեանքէն բաւական, էրկանմէն
խիստ գոհ կինմարդ կերեար նա...

Ադկից ջոկ ալ կիզչկան մէկ օրմը էրկանը ան-
հանգիստ չէր անէր ու նարամէն վլաթիի, ոլաթին-
քայի, շլեափի, եա չէնէ ուրիշ չէշիթ հալաւի համար
ստակ չէր ուղենար, բայց ինքն ալ միշտ նորէն նոր
կըհագնէր, խասէնալ խասը...

Խութսուզին Քառփուշը երբ մէմէկ ադէն շա-
խայով կնկանը կըհարցուներնը ադ հալաւը որին ստակով
արածը՝ կնիկը իրեն սովորական կակող ձանովը միշտ
կասէր նարա՝ «որին ստակով պիտ լայ, հալիր անե-
լու չէ խօմ, մամաս արիլ է տա»:

Ադկից անթին ինչ Քառփուշը բան կըհարցունէր,
ինչ ալ կնիկը բան կասէր, ադպէս ալ կանցնէր կեր-
թար:

...Եւ Քառփուշը շատ բաւական էր ըեն կնկան-
մէն ու միշտ շփանալէն ինքը ըեն կասէր՝ «Կարգը-
ւելէդ էտև ասպէս կնիկի ըյնիս չէնէ, անալ գէնկին,
սիրտացաւ մամայով. կարգըւածէս վերիյէ տուած հա-
խէս մէկ քապիկ խարջած չիմ կնկանս հալաւի հա-
մար, ալայը մարը կանէ, իսկ ստակս ալ թօփ կանիմ.
ու օրւան համար կտորմը բան պէտք է խօմ:

Եւ ասպէս անցաւ մէկ բանի տարի... կնկանը

վրան միշտ նոր հալաւ էր, իսկ ըեն առած հախնալ
վիրա թօփ կանէր...

Նացա պէս «բախտաւոր» մարդ չըկար աշխարքին
մէջը...

Բայց յանկարծ նացա հանգստութինը խանգա-
րուեցաւ՝ էլլաւ մեծ վայնան և կիզչկային էրկանը
իբրև զափամնօյ սալտաթ՝ առին վայնայի տարին...

Կիզչկան ալ գնաց վակզալ ճամփելու. շատ լա-
ցից խեղճ կինմարդը, շատ մազերը փետից, բայց
ֆայդա ունէր ինչ...

Երբ որ Քառփուշին նստած վագոնը թոռնիթցա
էղաւ նը կիզչկային սիրտը անցաւ, ընկաւ...

Քիչմը հեռուն կայնած էրկան բօյով, տեսօք
բըյըլիներով մարդը վազից քովը՝ զրկից տարաւ վակ-
զալ էսը զլօխը բերից և տասը մինութէն ամեն բան
մոռցըւեցաւ... Ալզի մարդուն հետ մէկտեղ իզվօզչիկ
նստած տուն էկան՝ Քառփուշին տունը:

Զայ, զաքուսքա, խունդում, շախա, գիտխաքի
էրիկը քովը նստած էր, հիշ վայնայի գնացած չէր...

Իսկ Քառփուշին միտքին մէջէն չէր էլլէր ամե-
նեին կնկանը լացած աչքերը, սիրտը անցածը և մին-
չև կնկանմէն գիր չստացաւնը միտմիտ չեղաւ...

Կիզչկան ասպէս բան ֆենեռով վնտուէրնը չէր
գուտնէր... բանի տարի է ասպէս բանի ճամփա կը-
նայէր, բայց ասլապիր չէր ըլար, որ էրիկը տունէն
էլլէր և ինքը ազատ կերպով կենար «սիրած մարդուն»
հետ մէկտեղ:

«Քուը կուզէր մէկ աչք, Աստուած տըւից էրկու
աչք»:

Կիզչկան վնտուածը գտաւ...
Ալզի վակզալէն հետը էկած մարդը կիզչկային
փասթաեաննի եօլգաշը էղաւ...

Իսկ Քառիուշը վիրա գիր զիրի էտել կիրկէր ու
կասէր կնկանը՝ «Էկէր կը վախնանը մենակ կենալու՝
գոցէ դուռերդ ու գնա մամայիդ տունը...»

Բայց Լիզչկան կարող էր աղպէս անել... մէկ
քանի անգամ գրից էրկանը, որ մամային քովը եօլգաշ
առիլ է:

Ասպէս ալ Քառիուշին բերանը մածուն քսից ու
միամիտ արաւ, իսկ ինքն ալ ունաթ՝ լանքին բօյին
կապրէր ուղեցած մարդուն հետ:

Խութսուզին Քառիուշին գնացածէն անցաւ 10
ամիս. Լիզչկան ունեցաւ մանչ զաւակ... մարդուն
բան չգրից, զէրէ հաստատ զիտէր զուլիսուն զալիքը...

Աստուծմով էր զայիր, իսկը իգա ժամանակնե-
րը Քառիուշին փոլը աղ քաղաքին վրայէն անցուցին
տրիշ տեղ տանելու համար. մարդը հազիր ոլոչայով
օգտուել ուզաց և գնաց «սիրելի Լիզչկային» տեսու-
թինի:

Տունը մտաւնը կնկանը էփփէի վատած ու մա-
շուած գտաւ, բայց խեղձը ամպէս թահմին արաւ,
որ Լիզչկան բեն համար մաշուածէն աղպէս վատիր
էր ու գեղնիլ էր:

Քիչմը ատէն կնկանը քովը նստիլ էր զայիր 10
ամիսուան կարօտը տոնելու համար, մեմալ կնայիս
անսեմթէն ճըռու արաւ Լիզչկային աղան լացից...

Քառիուշը սէս-մէս էղաւ...

Լիզչկայինն ալ էրէսին գունը թուաւ, բայց քիչմը
ինքը բեն ժողոտից ու Քառիուշին վիզին փաթ-
թըւելով ասաց «Քառիուշ, հոգիս, աչքդ լուս, մանչ
զաւակ ունեցար գիտիս, մեմը նայէ, իսկը բեզի կը
լմանի...»

Բայց Քառիուշը աշղըն բեն տունէն էլլածը

մատին վրան հեսապ արիլ էր ու գիտէր, որ ադ
աղան կարող չէր ըենմէն էղած ըլաւ...

Տղին վրան չնայելէ ու կնկանը բարե մնայ չա-
նելէ առաւ բառթուսը ու էլլաւ դուս...

Դուսնալ մէկ մարդ խարաւուլէմիշ կանէր. ադալ
տեսաւ... անկից չորսդին չնայելէ. գնաց վակզալ ու
էտել չնայելէնալ զնաց դէպի վայնա...

Կնիկը շատ լացից էտելն, շատ մազերը փէտից,
բայց Փայփա չունէր՝ «Մունկուն չըւալը ծակիլ էր
ու դուս էլլիլ էր»...

1915թ.



Յ Ա Կ Ա Կ

<i>№</i>		<i>Երկու</i>
1.	Սելսէմը	7
2.	Սոնիչկային քնիժքան	14
3.	Հասարակի բուզան	19
4.	Լիզկան	27

ՀՀ Ազգային գրադարան



NL0341164

34535

Քինչ է 15 դադ.